

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՉՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ն ՀՀԿՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
3	Մարի հրատարակչություն	<p>Ամսագիրը նախատեսվում է միջին դպրոցական տարիքի աշակերտների համար: Բովանդակային չափանիշներ. ամսագիրը կներառի`</p> <ul style="list-style-type: none"> <li>• լեզվական գրագիտությունն ու կարողունակությունը զարգացնող նյութեր,</li> <li>• սովորելու կարողունակությանն ուղղված նյութեր,</li> <li>• ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությանն ուղղված նյութեր,</li> <li>• թվային և մեդիա կարողունակությանն ուղղված նյութեր,</li> <li>• մշակութային կարողունակությանն ուղղված նյութեր,</li> <li>• մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությանն ուղղված նյութեր,</li> <li>• տնտեսական կարողունակությանն ուղղված նյութեր:</li> </ul> <p>Ամսագիրը կնպաստի ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 136-Ն որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 4-րդ գլխով սահմանված վերջնարդյունքների ապահովմանը: Կառուցվածքային չափանիշներ. • ամսագրի յուրաքանչյուր համարում էջերը բաժանված կլինեն 4 առանձին խորագրերի, • ընդգրկված նյութերի շարադրանքը և ներկայացման ձևը կհամապատասխանի այն տարիքային խմբի սովորողների ընկալումներին, ում համար նախատեսված է տվյալ ամսագիրը, • ամսագրերում գետեղված նյութերը, որպես կանոն, չեն կրկնի դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում ընդգրկված նյութերի բովանդակությունը, • տեղեկատվության ազատությունը սովորողների հնարավորություն կտա հաղթահարելու կրթական ծրագրերով նախատեսված բովանդակության</p>

սահմանափակությունը, կնպաստի բազմակարծության ձևավորմանը և ինքնուրույն մտածողության զարգացմանը, կլրացնի նախատեսված բովանդակությանը՝ մեկնաբանված այլ մեթոդաբանությամբ, • ամսագրերը կունենան կրթական գործընթացին, երեխաների ստեղծագործական մտքին, նախասիրություններին ինչպես նաև սոցիալ-բարոյական ուղղվածությանը աջակցող բաղադրիչ, • ամսագրերը կնպաստեն երեխաների՝ միմյանց հետ հաղորդակցվելուն, • ամսագրերին կարող են թղթակցել ինչպես ավագ այնպես էլ միջին դպրոցական տարիքի դպրոցականները, որտեղ նրանք կներկայացնեն իրենց տեսակետներն ու դիրքորոշումները տարբեր հարցերի (քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, գիտական, մարզական, համայնքային կյանքի) ու երևույթների վերաբերյալ: Տեխնիկական չափանիշներ. • մամուլը՝ 2 տ/մ • չափսը՝ 60/80, 1/8 • կազմը՝ կավճապատ, գունավոր (չորս և ավելի), 115 գր. • թուղթը՝ ոչ կավճապատ, • տպագրությունը՝ գունավոր (չորս և ավելի), 70գր. • պարբերականը՝ ընդհանուր 2 համար, որից յուրաքանչյուրը՝ 4167 տպաքանակով, • միջին դպրոցական տարիքի աշակերտների համար նախատեսված ամսագրերի տպագրական որակը կհամապատասխանի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման Հավելված N 2-ի 3-րդ կետով ամրագրված և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 2 լճայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու մասին կարգով գործողության մեջ դրված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 797 որոշմամբ ընդունված Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 007/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ-ի պահանջներին, • ամսագրերը կունենան անվանում, • ելքային տեղեկություններ՝ տպագրվող ամսագրերի հրատարակչական որակը կհամապատասխանի Հայաստանի Հանրապետությունում գործող ՍՏ 4.482-87 ՍՏ 4.482-87 «Издания книжные и журнальные» Издательско-полиграфическое оформление и полиграфическое исполнение պետական ստանդարտներին, • հատուկ նշագրում՝ ամսագրերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ Վաճառքի ենթակա չէ բառերը, • ամսագրերը կլինեն նոր՝ չօգտագործված և հայերեն լեզվով, • ամսագրերում ընդգրկված նյութերի 70 % կլինեն հեղինակային, • ամսագրում ընդգրկված նյութերում առկա տեղեկություններն ու փաստերը կլինեն հավաստի, ստուգելի և կունենան աղբյուրների հղումներ, • պատրաստի նյութը տպագրության հանձնելուց

		<p>առնվազն 15 աշխատանքային օր առաջ փաթեթի նմուշ-օրինակը կտրամադրվի պատվիրատուին՝ առկա նյութերի բովանդակության հաստատման • նպատակով: Ամսագրերի նյութերը կլինեն առանց ուղղագրական, ոճական, իմաստային և նմանատիպ սխալների:</p>
--	--	---



## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ИЗДАТЕЛЬСКИЙ ДОМ МАРИ, ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом  
ՀՀԿՄՍՆԷԱՃԱՊԶԲ-22/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	товарный знак	технические характеристики
3		